

ՍԻՄԵՈՆ ԳՊՐԻ ԼԵՀՆՑԻՈՅ

ՈՒՂԵԳՐՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ Ի ԼՂՈՎԷ Ի Կ. ՊՈԼԻՍ, Ի ՀՌՈՄ, Ի ՄՈՒՇ ԵՒ ՅԵՐՈՒՍԱԿԷՄ ՅԱՄՍՆ 1608—1619

(Շարունակութիւն):

13. ՈՒՂԵՆՈՐՈՒԹԻՒՆ ՅԵՐՈՒՍԱԿԷՄԱՅ Ի ՀԱԼԷՊ

ԿԷՍՈՒԱԿԷՍԻ

Եւ ուխտաւորաց զլուսի եւ մեծ՝ Յովհաննէս կաթողիկոսն էր: Ունէր սա երկու մանուկ հարեղայս, կոյսք եւ ամօթխածք. մինն վարպետ եւ ժամասաց, համեղաձայն. միւսն բանասէր եւ աղնիւ գրագիր. զգեցեալ էին խարազն սեւ եւ վեղարն գերեան ծածկէր<sup>1</sup>: Կայաք ՁՃ հողի ընդ այր եւ ընդ կին:

Էին ընդ մեզ եւ Տաճիկքն, որ Կ է ս ա կ է ս կոչին. սոքա եւս ուխտ եկին յԵրուսաղէմ մեծաւ հաւատով. Հայոց լեզու խօսին, թուրքնակ չի գիտեն. եւ են երկրէն Հոռոմկու. գողայս նախ թլիխտել տան եւ անպմկրտեն՝ ըստ Խրատցն. երթան յեկեղեցիս եւ ի մէջիթ. մեռելոցն՝ քահանայից տան նախ կատարել, եւ ապա գայ իմանն՝ թաղել տանի, եւ զայն առնեն վասն երկիւղի. ապա առաւել սիրեն զհաւատն Լուսաւորչի քան զՄահմէտի:

Կայր ընդ մեզ երկու ձիաւոր թարձիման եւ չորս չափուչ, որք են խուլափուլք. զի յառաջ երթան եւ յետոյ: Այլ եւ այն Ապտալն ընդ մեզ էր. եւ երկու այլ վանաց մշակ, որ մինչ ի Հալապ բոկ ստամբ եւ հետխոտս գնային, քարուտ, փշոտ եւ մացառուտ ճանապարհս:

ՀԱՆԳՐՈՒԱՆՔ ԺԱՆԱՊԱՐՀԻՆ

Եւ հասաք ի ԹՈՒՐԱՊԷԿՆ. տվաք մէկ մէկ ոսկի: Եւ անտի եկաք ի խան մի ԼՈՒՊԷՆ. տվաք երկու երկու բարա. զոր եւ անդ եւս անձրեւոյ ջուր արբաք. եւ անդ առին դափար երկու ու կէս զուռուչ մարդազլուսի: Զի կէս աւուր ճանապարհ է Լուսէնու ԼԱԳԻՍՍԱՅ, որ է Ն ա պ Լ ու ս քաղաք. եւ էր քաղաքս այս քրիստոնէից չէնք. եւ մէջն ամէն եկեղեցիք, եւ թվի թէ Յուանկաց, զէրա քլաշթօրնի էր.

6 վեղարն: — 15 թաղել:

<sup>1</sup> Կ'ականարկուին անուշտ «Ամթեցի վարպետ Իսրայէլ» եւ Ղազար արեղայ որ յայտնի է իրբեւ «գրագիր» տե՛ս անոնց մասին «Հանդէս Ամսօրեայ», 1933, էջ 313—314 եւ 316:

եւ ասին թէ աստ զլուսեցին զՅովհաննէս Մկրտիչն:

Եւ անտի բազում լերամբ եւ մայրիւք եկաք ի սուրբ լեռոն ԹԱՓՕՐ. եւ հանդէպ նմին Հերմոն, վայելուչ եւ գեղեցիկ, տափարակ եւ ծաղկազարդ. որ ի ծաղկանց հոտոյն հեշտանային մարդիկ. եւ ստորոտ լերանն կայր գեղ մի. եւ ասին թէ ի գլուխն ԺԲ ազգի ժամ կայ, վիմաչէն եւ զմայէթաձեւ, բայց աւեր եւ ամայի էր. եւ մեք չկարացաք ելանել ի վեր, զի քարվանն շուտ ելաւ:

Եւ եկաք ի խասաղա մի ձիՆԴԻ, որ է գլուաց բնակութիւն. եւ ասին թէ անդ ելին եօթն դեւքն Մարիամ Մաղդաղինացուն. եւ լերան մի տակ քաղաքն ՆԱՅԻՆ, ուր Տէրն յարոյց զորդի այրոյն: Եւ ինչ ուխտատեղ երթայաք, պիղծ Արալին զմեզ հայհոյէին, թէ զուք արժանի չէք կոխել այս սուրբ տեղիքս. եւ զաֆիր տալով փրկիմք. ապա թէ ոչ բնաջինջ առնէին զմեզ: Եւ անտի եկաք ի ԱՅԻՆԹՈՒՃԱՌ. եւ կէս աւուր ճանապարհ ձախալողմն էր քաղաքն ՆԱՉԱՐԷԹ, որ գնացին ոմանք ի մերոց ձիաւորաց ընկերք եւ ասին թէ Հոռոմի վանքեր կան մերձակայք՝ յոյժ զօրաւոր եւ սքանչելադործք: Եւ անդ եւս տվաք ԺԲական փարա. եւ ի Թուճառու մէկ օրն հասաք ի գեղն ԼՈՒՊԻՍԱՅ. եւ այս յօթեանքս ամէն հոր կար խորու. որ եւ մերձակայ գեղօրէից եւ ի հեռու տեղաց գային վասն ջրի՝ ակերով, եւ բազում պախրէք եւ ջուր ուղտուսը բոլորէին զհորն եւ լինէր աղմուկ վասն ջրի. եւ որ ուժով էր՝ նա քարէք ջուր եւ տայր անասնոց. եւ չկարէին տեղ գտնուլ, վասն որոյ կովէին: Եւ կայ դեռ սահմանն այն, որպէս ի հնուին. եւ այն հորերն են, ուստի Յակոբ հանէր ջուր, Աբրահամ եւ Սահակ, եւ օգնէին Հոռոմէլայ: Այլ եւ մերձ նապլուսայ տեսաք զհորն, ուստի Քրիստոս խնդրեաց ի Սամարոհոյն ջուր: Այլ եւ տեսաք ի ճանապարհին բլուր մի եւ ի վերայ չէնքեր, սարայնի, եւ սարային առջեւն դարպաս մի փլած, միայն մարմարիոնեայ սներն երեւէր. եւ ասին թէ այս Հերովդէսի դարպասն է: Եւ անտի առաջ խօնախ մի առաջ գնացեալ՝ եկաք տափարակ դաշտ մի գեղեցիկ. եւ ասին թէ աստ Քրիստոս կերակրեաց զՅՌան հինգ հացով եւ երկու ձկամբ. եւ շրջեալ ընդ վայրքն՝ անկեալ ի տե-

38, 77 տարարակ: — 47 մաղթադիւնացուն: — 50 հայհոյին: — 65 յուժով: — 67 կա: — 70 հոռոմէլա... նապլուսա: — 71 ի չիբ: — 73 չէնքէր: — 75 մարմարիոնեայ սներն:

զին երկրպագեալ զքսակս եղաք եւ խնդրեցաք յԱստուծոյ, զի եւ մեզ լիցի պարագաթն այն: Եւ ի վայրս երեւէր ՏԻԲԵՐԱԿԱՆ ԾՈՎՆ. որք իջեալ ի լեռնէն՝ լողցաք ի ծովն: Եւ կայր այս կոյս ջրոյն աւերակ տներ. եւ ասին թէ այն Պետրոսի էր: Եւ այլ յառաջ՝ գիւղն Յովհաննու եւ Յակոբայ որդոց Զերեթայ: Եւ ի միւս կողմն լեռոն Տիւրոսի եւ Սիզոնի, ուստի խոզարածքն փախեան եւ անկան ի ծովն. որ եւ ըմպեցաք զպատվական ջուրն, լուացեալ ձեռս եւ գերեսս. եւ անդ օթեցաք: Եւ անտի հասաք ի ջրհորն, ուր զՅովսէփ ընկեցին եղբարքն. եւ անտի հանեալ վաճառեցաւ Եգիպտացոց. յորում վրայ քէմէր կար չորս սեան վրայ. կայր անդ մէկդիթ եւ քարէ պատ. ունէր աղնիւ արօտ մարդասոյ. բայց հորն ցամաք էր: Եւ անտի մէկ օրն հասաք ԿԱՐՄՈՒՆԾՆ ՅԱԿՈՒՍԱՅ. եւ տեղին ուր դօտէմարտեցաւ ընդ Տեառն՝ մեծ եւ փառաւոր վանք մի էր, բայց այժմ աւեր: Եւ անցեալ յայնկոյս՝ օթեցաք: Եւ անցած գետն Յորդանան էր. որ եւ անդ առին իննական փարայ: Եւ անտի չողով գնացաք. զի չողն մեծ էր՝ գիշերն գնացաք. այլ եւ ահ ու զող կայր Արապունու. թէպէտ մեք լազում էաք, սակայն երկնչէաք. զի նոքա նենգաւոր եւ բազմարիծ աղք են, որպէս վերոյ սասցաք. որ եւ ամէն օր հանդիպէաք բանակի նոցա. զոր յարօտաշրջեալ արածէին զուղտս, որպէս ի Տաճկաստան՝ Թուրքմանք: Եւ օր մի հանդիպեցաք անթիւ ուղտուց՝ աւելի քան թէ հազար, այլ եւ յուրով Արապք. եւ զինի՝ ուղտ մի մեծ մաֆայով, նստեալ ի վերայ արապ մի, գլուխն թաղանձան, եւ կրնն ընդ նմա. եւ ասին թէ սա է թաղաւոր. եւ չուրջ չբլախ Արապին՝ ձիաւոր, միայն չապկովք, եւ բոկ ոտն ի գանկին. բայց ձիանն խիստ աղնիւ եւ պէտափի, նուրբ եւ ճընս, ոտվին՝ նազուք եւ երկայն, միջվին՝ բարակ, եւ խիստ վազան: Եւ մէկ ձին հազար, երկու հազար զուռուչ ծախվի ի տեղն. զի չկայ աշխարհս ձի նոցա ձիոց նման. զի որչափ սարբ եւ սիրվի լեռ լինի՝ ելանեն. եւ թէ իրեք օր ջուր չի տաս անջրդի տեղիս՝ լռեն. եւ այնպէս արագ եւ սրընթաց են, որ իբրեւ նետ վազեն եւ որպէս թռչուն թռչին. եւ թէ իրեք օր վազեն՝ չեն յոգնել: Եւ ամէն փնդի ոչինչ արապ, որ փող մի շարժէ, նստի հազար ոսկու ձի՝

84 լողցաք: — 91, 100 յողեցաք: — 93 յեգիպտացոց: — 116 ի գանկին պայպս յօրինակին, կարդա՛ յուզանկին (տե՛ս տ. 128 «ուղտուկուն»): — 120 չկա: — 122 լէս: — 124 յարագ եւ սրնթաց: — 126 օգնել: — 127 օսկու:

առանց թամբ եւ լկամ մէկ գրամի, ուղունկուն՝ փայտ, շապկանց. ոչ գէն ունին, ոչ այլ ինչ, միայն մըզրախ. ապա նետաձիգ տեղաց նշանեն զմարդն, եւ այն եղէգ է ամուր որպէս հարագանի: Եւ որպէս յիշվի Լէհու թֆաքն, Թաթրի նեան, Քրթու ձօպանն, այսպէս եւ Արապին ճիտան: Եւ մեք տեսեալ զթագաւորն՝ մնացաք մինչեւ անցին. բայց մեզ քնաս չարին. զի նոքա չեն Ասը, այլ Թապի. միայն չրջին խորանօք որպէս Աբրահամ, Իսաք, Յակոբ եւ այլք:

Եւ մէկ խօնախ Շամայ տեսաք բլուր մի, ուր գնաց Հոգեւոր Տէրն եւ ամէնքս զկնի. անդ շարական երգեց, եւ աղօթեցաք. եւ ասին թէ անդ նահատակեցաւ Վահան Գողթնեցին: Եւ իրբեւ մերձեցաք ի Շամ, տեսաք գետք յորդարուք, այգիս յուրով, մրգաստանս, բուրաստանս յոյժ յոյժ: Կէս աւուր ճանապարհ սաֆի այգիք էին, գեղեցիկ եւ վայելուչ:

ԴԱՄԱՍՍՈՍ

Եւ մտեալ ի Շամ որ է Դամասկոս, տեսաք չէն եւ բարելի, մրգաւէտ եւ պտղատու. եւ էր նա մեծ քան զՍտամպուլ. կային մէջիթք մեծամեծք եւ բարձր մինարայք, մեծածախ բաղանիք եւ բազմայարկ խաներ, խալհանաք սաֆի մարմարիոնեայ եւ սալարակապ, որ այլ տեղ տէկամ չի լինի. եւ ջուրքն առատ ամէն փողոց որպէս ի Պուրսայ. ափուլիւն, լիւթիւն եւ ամէն բարեաց առատութիւն: Օր մի գնացաք ի Շաշիլ մէջիթն, որ էր մեծ եւ լայնանիստ եւ զարմանաչէն. եւ ասին թէ սա եկեղեցի էր եւ այժմ անօրէնք խլել են, միջիթ չինել: Եւ կայր յաջ կողմն աղբիւր մի մեծ, որ ասին թէ աստ մկրտեցաւ Պաւլոս առաքեալն Անանիայէ. եւ այն մէջիթն չթողուն քրիստոնեայ մտանել: Անտի գնացաք ի պէգէստան, որ էր նման Էտրնու Ալի փաշին. բայց սորա չէնքն աւելի էր եւ զարմանալի եւ աննման, վիմաչէն, կամարակապ. եւ տեսաք գանազան խումաչք, թաֆղայք, ալաճայք, զուլթիք, աթլաւք, մուխատամ գօտիք, քֆղբիք, վալայք եւ այլ թօճվայք, որ միայն վաճառականք գիտեն գանունն եւ զգինն. զի եւ անտի ելանէ յուրով ապրշում: Այլ եւ կային սէլվիք, խուրմայի ծառք, մեծախնչք խանութնի եւ շատ շարչունի: Եւ ասին թէ երեսուրդ քար մտէ ի քաղաքս եւ անյայտ լինի.

144 ոլով: — 145 յոյժոյժ: — 146 վայել: — 1 տամասկոս: — 2 բարելի: — 6 մարմարիոնեայ: — 12 (էր) սա կրկնուած: — 16 քրիստոնեայ:

զի ներքին ջուր է եւ ջաղջնիքն ջուրն ջուր  
 30 անձ. եւ մարդ չի գիտէ թէ ինչ լինի ջուրն.  
 որպէս գետն Տիգրիս հասեալ Կարնօ այլ ոչ  
 երեւի՝ մտեալ յաւազն, այսպէս եւ սայ: Դար-  
 ձեալ մեծ (գետ) մի այլ երթայր ի մէջ քաղ-  
 քին: Եւ այնպէս քաղցր է քաղաքն այն, որ  
 մարդ իւրմէն բնաւ չկամի հեռանալ ի վայել-  
 35 չութենէն: Անդ տեսաք սպիտակ շամիչ եւ  
 կանաչ, մեծամեծ որպէս խուրմայ. եւ հաց  
 սպիտակ իբրեւ զձիւն. եւ պիտա եփին երկայն  
 եւ անուշ, եւ երբ կտրես՝ ձգտին որպէս շիւղք,  
 եւ Արաբին յուսն դնեն եւ այնպէս տանին:  
 40 Նոյնպէս սպիտակ պատեղք եւ աղնիւ սէր-  
 կելիլ եւ այլ բազում բարի, գինի եւ այլն:  
 Եւ յիրաւի ասեն Տաճիկք. «էվէլ Շամ, ախրը  
 Շամ»: Այլ եւ Տաճիկքն քաղքին այնորիկ յոյժ  
 երկեղած եւ մարդասէր են եւ աստուածավար.  
 45 Գլխաւորն են սիրեն եւ բնաւ չասեն «կալուր»  
 կամ «տինսիլ», այլ «էսակուլի» կամ «հաճի»:  
 Եւ թէ զոք ական չուպանն եղէ՝ ամէնքն վրան  
 թափին եւ ազատեն. չթողուն սուխրայ բանիլ  
 կամ այլ ինչ անիրաւ: Այլ տեղ այսպէս մար-  
 50 դիկ քաղցր եւ բարի շտեմի. քրիստոնէու-  
 թեան լայնիս:

Կայր անդ հինգ-վեց տուն հայի: Եւ ասին  
 թէ յառաջն հինգհարիւր տուն էր. եկեղեցի  
 եւ քահանայք անկան յիրար. քահանայք եւ  
 55 երեսփոխանք եւ ժողովուրդքն աղմուկ եւ  
 խռովութիւն արարին, մինչ զի եկեղեցին մատ-  
 նեցին անորինաց եւ ինքեանք եւս մատնեալ  
 բռնաւորաց՝ տուքանք տուեալ, պատիժ կրեալ.  
 վասն որոյ ցիր ու ցան եղեալ կորեան վասն  
 60 անօրէնութեան իւրեանց եւ եղեն որպէս երազ  
 ըստ Դաւթայ: Վա՛յ ինձ որ ամէն տեղ Հայք  
 ի կրիւ եւ ի հակառակութիւն են. եւ յիրաւի  
 կոչին Հայք, որ են անմխարանք:

Եւ կայր ԽՈՒ հոռմի տուն. այլ եւ անդ  
 65 նստէր Հոռմի արքեպիսկոպոսք. եւ ասին թէ  
 Հապաշք Շամայ եպիսկոպոսէն անունն ձեռ-  
 նադրութիւն: Եւ կացաք անդ իրեք օր: Բա-  
 գում իրս եւ գործս եւ խումաշս եւ արվեստս,  
 այլ եւ չնքեր տեսաք. զորս ոչ կարեմ մի ըստ  
 70 միջէ գրել. եւ տվաք երկու երկու դուռուշ:

Եկաք անտի ի գիւղ մի. եւ տեսաք բարձր  
 լեռան վրայ վանք մի Ասորոց. եւ վանից բո-  
 75 լոր բարէ բարձր պարիսպ. մէջն ԽԶ մարմարէ  
 սիւն կայր, Խ մայրպետ. եւ անդ տվաք իրե-  
 քական վարա: Անտի եկաք գեղ մի այլ, որ

38 երփ... ձկտին... ջեղք: — 43 ոյժ: — 49  
 մարդիք: — 61 դաթա:

հոռմի անուամբ ԱՊՐՈՒՏ կոչէին. կայր անդ  
 երկու հրաշարի եկեղեցիք. մինն ի գիւղն եւ  
 մին յառջեւ գեղին. զոր հանել էին գեղեցիկ  
 80 աներն եւ ի խանն դրել. միայն խորան մնա-  
 ցեալ էր եւ վերին քէմէրն:

Եկաք անտի ՄԱՅԼՈՒՆ անուն. տեսաք  
 երկու բարձր լեռ քարածերպս վիմաց. եւ մերձ  
 եւ հուպ միմիանց, իբր թէ միացեալ, բայց  
 չեն կից, այլ կայ ի մէջն նեղ եւ անձուկ ճա-  
 85 նասպարհ, որ ճորով ձիււորն անցանի. եւ այն  
 լեռան քարնուման է խմորի. եւ այնպէս բարձր  
 են, որ թէ ի վեր հայիս գտակղ ընկնի: Եւ  
 անտի եկաք յայլ խասապայ ԽԱՐԱՍՐ անուն.  
 եւ տվաք անդ տասն տասն փարայ: Եւ անտի  
 հասաք ի ՀԱՄՈՒՍ քաղաք, որ էր քրիստո-  
 90 նէից չէնք. ունի անառիկ բերթ ի վրայ բարձր  
 լեռան, սիւլրի Հալպայ բերթին պէս. եւ բո-  
 լորն խանտակ սարբ, տաշած ու վիմօք հաս-  
 տատեալ, եւ պարիսպն ալ տաշած քարէ:  
 Անտի օր ու կէսն հասաք ՀԱՄԱՅ, որ եւ սա  
 95 նման Համուսայ է չէնք եւ ամէն ճանապարհն  
 գէյթունի ծառ էր եւ թղի. եւ տեսաք Համայ  
 ծառ մի մեծ խուրմայի. բարձրութիւն երե-  
 սուն կանգուն Հալպի. եւ ինքն է տօլապ, որ  
 զջուրն ի քաղաքն ձգէ. եւ էր բարձր լեռան  
 100 վրայ. կային հին եկեղեցիք վիմաչէն եւ մե-  
 ծամեծ մաղարայք, աւեր եւ ամայի. քանդի  
 քրիստոնէ չկայր անդ եւ ոչ մի: Եւ աստ եւս  
 երէքր ասպրում եւ ազգի ազգի թօհվայք գոր-  
 105 ծած. եւ սիրմէ պուրունձուքնի, դէլի մահրա-  
 մանի, ետղխնի եւ այլն, խուշախնի եւ ալա-  
 ճայք որպէս ի Շամ: Եւ ընդ արշալուսն մինչ  
 գնայր առաջքն քարվանին՝ Արաբին գլխառն  
 կարեցին, գոմանս վերաւորեցին, զայլս թա-  
 110 լանեցին, ոմանց էն տարան, զհէկպէն եւ  
 զայլն. ճիչ եւ աղաղակ վերցաւ. ազգ եղեւ ա-  
 ռաջնոցն, որ դարձան ձիււորքն սրով, թրով.  
 զի կային ենկիչարիք եւ սրահիք հետ մեզ.  
 ԹՖանքով ի վերայ նոցա հասին. եւ նոքա փա-  
 115 խան. բայց շատ վնաս եղեւ քարվանին:

Եւ անտի չուեցաք ի ԿԱՓԱՌՆԱՅՈՒՄ, որ  
 է ԱՐՅԱՌ, որ ի հեռուս կերեւէր բերթն եւ  
 քաղաքն. զի էր ի վրայ բարձր լեռան որպէս  
 85 էր մեր ասաց. եւ դու կափառնայում, որ  
 բարձրացեալ են, բայց իջցեն մինչեւ ի դժոխս.  
 120 Եւ ասին թէ մէջն սաֆի ձհուս է, եւ երկիրն  
 Մանողլուն է: Այլ Սայիտ որ է Բեթսայիղայ,  
 եւ Քորազին են ազգաւ Սամարայիք. Կէսա-

84 կա... յանձուկ: — 96 համուս: — 101 վրա:  
 — 107 յարշալուսն: — 108 դարվանին: — 111 աստ:  
 — 120 եւ չիֆ:

կէս գորով՝ սիրեն զքրիստոնեայս, խողի միս  
 125 ուտեն, բայց թլիփատին. եկեղեցի կամ մէջլիթ  
 չընեն, ոչ քահանայ, ոչ ոսպի, ոչ խմամ.  
 Դրիստոս կու պաշտեն, ապա Աստուած չեն  
 տակ. ապա մերձ են Հրէից եւ հին օրինաց:  
 Երկիրն այն խիստ քարուտ եւ ապառաժուտ  
 է. շատ ասպրում հասըլ կլայ:

Յայնմ ամի պատերազմէր խօնթքարն  
 հետ Մանողլուն. եկեալ էին բազում զօրք.  
 այլ եւ Մարայ եւ Շամայ խուրն: Իսկ Մանն զօ-  
 130 րաժողով արարեալ գնաց ընդդէմ նոցա ի պա-  
 տերազմ եւ յաղթեալ կոտորեաց զամենեւեան.  
 զայլս փախտաւան արար: Երկրորդ անգամ  
 առաքեաց զօրս. որ եւ գնոսա սրախողող ա-  
 րարեալ եւ զկարասին յաւարի էառ. եւ զօրա-  
 ցեալ գնաց մինչեւ ի Շամ. բայց ի քաղաքն  
 140 չկարաց մտանել. ապա շուրջ գնովաւ չէնլիք  
 չի թող, այլ ամայի եւ խոպան դարձոյց եւ  
 էած աւեր. եւ ասին թէ վասն այն սուղ է  
 ասըլմեղէնն. զի ոչ թուրի ծառ մնաց, ոչ  
 պօծիկ. զամէնն քանդեց Մանողլին: Եւ եր-  
 145 րորդուն ամին գնաց նա առ Փափն եւ միլըր-  
 տեալ եղեւ քրիստոնեայ. եւ Փափն երեա  
 հինգ դասարդոյ զօրք յօգնութիւն. եւ նա եկեալ  
 րազում կղզիս եւ քաղաքս տապալէր եւ կոր-  
 150 ծանէր. այլ եւ զԱյա Փայաս, Տրապուլուս եւ  
 զայլ ծովեղեցիս եւ եալուս եւ սկէլէս տիրա-  
 պետեաց. եւ դարձեալ գնաց ի Հոռմ եւ անդր  
 վախճանեցաւ: Իսկ յետ նորա որդին ա՛յլ ա-  
 ըլիադոյն երեւցաւ եւ լաւ անուն ժառանկեաց:

Եկեցուք ի բանն մեր. զի տվաք Համա  
 155 մէկ մէկ ուսպ: Եւ անտի եկաք խան մի, ուր  
 հինգական փարայ առին: Անտի հասաք ի  
 խան ԹՈՒՄԱՅ. եւ անդ օթեցաք, զի մեծ խան  
 էր, վիմաչէն եւ գեղեցիկ. եւ մեծ գետ մի  
 առջեւովն կ'երթայր:

ՀԱԼԵՊ

Եւ անտի անցաք մէկ օրն ի հոչակաւոր  
 եւ մեծահամբաւ մայրաքաղաքն Հալպա՛. եւ  
 Հոգեւոր Տէրն տարաւ զմեզ ընդ իւր ի Դար-  
 պան. եւ իջաք Եպիսկոպոսարանն: Եւ կայր  
 5 չորս եկեղեցի հուպ միմիանց մերձ Դարպա-  
 սին՝ մէկ բակ, մէկ մարունի, մէկ հոռմի,

130 կլա: — 132 մարա եւ շամա: — 144 քանթեց: —  
 152 յարիազայն: — 155 եկաք չիֆ: — 157 յօթեցաք:  
 1 հրաշարիք:

1 Հալպալի նուիրում այս գլուխը գրեթէ ամբող-  
 չութեամբ յառաջ բերած էինք «Հանդէս Ամսօրեայ»,  
 1933, էջ 307—308 եւ 318—319: Հոն խօսած ենք նաեւ  
 Ս. Բառասնից եկեղեցւոյ նորոգութեան եւ Պետիկ-  
 Պետրոս եւ Սանոս եղբայր գործունէութեան վրայ (էջ  
 309—333):

երկու հայի՝ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ  
 Քառասունք. եւ յայտ ամի՞ նոր նորոգած էր եւ  
 մեծցուցած՝ լայն եւ ընդարձակ, զմայլթա-  
 10 չէն եւ սայլակապ, յոյժ գեղեցիկ եւ վայելուչ.  
 եւ շինողն էր խոճայ Սանոս՝ եղբայր խոճայ  
 Պէտիկին: Զի էր Պէտիկն մեծ ոմն եւ երեւելի.  
 զի որպէս փաշայ մի շրջէր, երեսուն, քառա-  
 սուն եասախչով. ունէր ենկիչերիք, սրահիք.  
 եւ ասին թէ քսան եւ չորս դարամ ամալ ունի.  
 15 կօմրուկն, մուխթասիպութիւնն, սուպաչու-  
 թիւնն, խաներն, համամին եւ այլն ամենայն  
 նորա ձեռքն էր:

Եւ այս քաղաքս մեծ պէնտէր է եւ  
 շահրիստան. եւ յինքն կայ Հնու-հնդուստա-  
 20 նու մարդ, ամէն տեղաց վաճառական. եւ  
 ինչ կուճալ կամիս, անդ գտանես: Նստի  
 անդ չորս պալիս: Եւ մեր սուրբ Աստուա-  
 ծածնայ ժամն երեք խորան ունին Փռանկք,  
 որ ամէն շաբաթ եւ կիրակի գան պատարազ  
 25 առնեն. եւ թէ մերոնք պատարազեն, նոքա  
 սուրբ Քառասունք երթան: Բայց Մարունիք  
 մեծ սէր եւ հնազանդութիւն կ'առնեն մեր  
 առաջնորդին. երբ ժամուն կ'ընեն, գան զաջն  
 համբուրեն եւ արձակունն խնդրեն. եւ թէ  
 30 ժամէն ելած չեն, անչափ պիտոր կենան, որ  
 ժամն արձակի, խաչ առնուն, ապա երթան.  
 իսկ Հոռոմք զայս ոչ առնեն: Կան եւ Ասորիք  
 յորով եւ անուանիք. ունին քարէ եկեղեցիք  
 այլ տեղ»:

Եւ կայր մերձ եպիսկոպոսարանին քարէ  
 խցեր Հայոց: Եւ կաթողիկոսարանն ունէր  
 ներքնատուն, միջնատուն եւ վերնատուն վի-  
 մաչէն: Եւ պատրիարքն սուրբ Երուսաղէմայ  
 եւ կաթողիկոս Սըսայ էր Յովանէս կաթո-  
 40 ղիկոս, որ միշտ ի Հալպալ նստէր: Կայր եւ  
 վարդապետ մի Յօհանէս Ուռհայեցի եւ ար-  
 քեպիսկոպոս մի տէր Խաչատուր. լաւ տէր  
 վարպետ մի. որք էին հիւրասէրք, հեզ եւ  
 քաղցրբարան: Կայր այլ եպիսկոպոս երեք. 45

8 այսմ: — 14 եասախչով: — 23 աստուածածնա:  
 — 41 զոր:

2 Սիմէոն Հալպայ հասաւ 1617 Մայիս 15ին մօտա-  
 ւորապէս: Ուստի «յայտ ամի» բնելով կ'իմանայ 1616  
 Մայիս—1617 Մայիս: Եկեղեցւոյ նորոգութեան մասին  
 վարդան Լեհացի 1624ին կը գրէ Աւետարանի մը յի-  
 շատակարանին մէջ. «Հաւատարիմ եւ երկիւղած իշ-  
 խանն պարոն Խոճայ Սանոս չարապիւն... ցանկացաւ եւ  
 էառ զաս եւ ետ յիշատակ անկրելի ի սուրբ Քառա-  
 սունք յեկեղեցիս ի քաղաքս Հալպալ. զի իւր ձեռն-  
 սուրբութեամբն եւ իւր անդրանիկ հարազատ եղբօրն  
 պարոն պանծալի Խոճայ Պետրոսին օգնականութեամբն  
 շինեալ եւ նորոգեալ եղեւ սուրբ Քառասունքն ի թվին  
 Հայոց Ռիկ» (1616). տե՛ս Հանդ. Ամս., 1933, էջ  
 321—322:

հինգ հարեղայ եւ հինգ էրէց. եւ երեքհարիւր տուն հայի կայր: Իմաստունք, փարթամք, դեղեցկատեսիլ, նման Ջուղայեցոց եւ Ամթեցոց՝ անուանիք եւ մեծ վաճառականք, որ մարդ ամաչէր երեսփին հայիլ: Կայր խոճայ Ղանտիլն եւ այլ համբայք նորա քառսուն հազար, յիսունհազար բեռան տէր: Այլ եւ տներն մեծագին, տաշած եւ կոփած, բարձր եւ մեծ, նման Յամթայ տներուն տասն, տասնուհինգ հազար զուռուշի: Ունին եւ մարդավարութիւն. եւ են մեծ վաճառականք. գնան Հնդուստան, Պաղտատ եւ Ասպահան: Ունին եւ ազնիւ կերակուրք. եւ է ազգ մի ճաշ, զոր մըխլա կոչեն, նման պօրէկի, քառսուն, յիսուն ձու ածեն եւ զանազան բանջարօք, եւ աւելի քարար դնեն, որ է... (դատարկ). առանց մըսի ի տապակի եղեալ տան ի փուռն. դարմանալի համ ունի: Եւ զգետն է նոցա սօֆ, խուժնի, աթլաս. եւ վաթսուն, եօթանասուն, հարիւր չլայ չուխայ: Բայց հայնակ, ոչ թուրքնակ չի գիտեն, միայն արապնակ զրուցեն. եւ գիր ընթեռնուն արպի լաւ, ոչ միայն աշխարհականք, այլ եւ քահանայք: Եւ զամենայն գրեանս արապի լեզու թարգմանած, որպէս Ահեցիք եւ Ստամպուլցիք հայնակ չգիտեն: Եւ է քաղաքն պարսպաւոր՝ աշտարակօք եւ ամրոցիւք. ունի տասն դուռն. եւ ամէն պուրճ թօրեր շարած. եւ ունի դատ ի բերթէ հիսար մի յոյժ ամրոց, անտաշ քարէ բարձր եւ սուր, նման Համուսայ բերթին. բայց սա ա՛յլ բարձր եւ մեծ, եւ բոլորն խանտակ, ի վերայ բարձրաւանդակ տեղոջ. եւ անդր յորով թօրեր հանած պատուհանիցն ի դուրս: Եւ խանդակին մէջն մեծ եւ խոր, ու ջուր կայր. եւ ինչ ազգ ճանաւար ուզես, անդ տեսանես: Եւ յայս կողմն ջրին Նասիմին է պառկել. որում վրայ երկու ծառ բարակ եւ երկայն բուսել է:

Եւ ունի ՅԿԵ խան աւուր զլուխ՝ մի քան գմին լաւ, եւ անթիւ խանութ, կրպակք, պէղէսդան եւ այլն. եւ ինչ բան ուզես՝ անդ գտնուս, զի մեծ շահրիտան է: Այլ եւ Փոանկի խաներն, ուր պալիօք նստին, լաւ չուխայ, աթլաս, քէմխայ եւ Փոանկի խումաշ գտանես: Նոյնպէս ազնիւ բաղանիք եւ ջուրն առողջ, լի եւ առատ: Եւ կացաք անդ ամիս մի, զի մեծ սէր եցոյց մեզ Հոգեւոր Տէրն: Իսկ յորժամ մեք ի Հալայ մտանէք՝

55 մարդավառութիւն:

կէս աւուր ճանապարհ դէմ մեզ երեկ Հայոց ազգն, արք եւ կանայք, ծերք եւ տղայք, երիտասարդք եւ կուսանք, այլ եւ Ասորիք, Խբէլք, Մարունիք, նաեւ Թուրքաց. զի տաթ է յորժամ յերուսաղէմայ ըխտաւորք գան, պիտոր դէմ գնան: Ապա զի Հոգեւոր Տէրն ընդ մեզ էր եւ քաղաքին առաջնորդն, վասն այն առաւել պատիւ արարին. եւ քաղաքն դղրդեցաւ: Այլ եւ խոճայ Պէտիկն եկաւ երկու եղբարք հեծեալ ի սպիտակ ձի արապի. ոսկիակազմ ականակուռ ընդելուզեալ ակամբ եւ մեծագին մարդարտօք սանձն, թամբն եւ այեարն. որ փայլփայլի տայր ոսկին եւ ակունքն եւ չափրազն դիպակաց պղպջուն եւ մեծածախ. ունէր ընդ իւր բազում ճորտ եւ ծառայ, սիրահիք եւ եկեղէշարիք որպէս փաշայ մի. եւ իբրեւ մերձեցաւ նա՝ իջաւ ի ձիոյն եւ անկաւ յոտս կաթողիկոսին, ողջունեաց զնա: Եւ իբրեւ նստաւ եպիսկոպոսօք, վարդապետօք եւ քահանայիւք եւ բազմամբոխ ժողովրդօք, որք եկեալ երանի տային աչացն եւ զաջն համբուրէին. եւ անտի դարձեալ առ ուխտաւորս եւ առ ծանօթս, առ սիրելիս եւ բարեկամս, ունելով ընդ ինքեանս բախի, գինի, կերակուր եւ այլն. եւ ուրախացեալ ընդ գալուստ նոցա գրկախառն համբուրէին զմիմիանս եւ նըստեալ ի ճաշ զուարճանային: Եւ ոչ ոք մնաց, որ ծանօթ չունաց կամ սիրելի, բայց յինչն: Քանզի ոչ ոք կայր ինձ սիրելի, ո՛չ ծանօթ, ոչ ազգական. ո՛չ ես զոք ծանեայ, եւ ո՛չ ոք զիս. եւ մնացի ես միայն ի բացեայ եւ մեկուսի, թափուր եւ ունայն. տրտմեցաւ անձն իմ մինչեւ ի մահ, խոռովեցաւ ոգի իմ եւ արտասուս հարեալ հառաչեցի եւ ասեմ զողբս զայս՝<sup>2</sup>.

102 զղբեցաւ: — 104 յականակուռ: — 105 ականք: — 106 փայլփայլ: — 124 ծանեա: — 125 ի բացեա: — 126 յունայն: — 127 յողի: — 128 հառաչեցի:

<sup>3</sup> Սիմէոն Հայրէնեբուրե նմանութեամբ, նաեւ անոնց ազգեցութեան տակ երգած է ողբս. համեմատէ հետեւեալ քառուկները.

Յաշխարհս ես ի ժուռ եկայ չղբոս ըզրդ բարեկամ. Ձխելքս ի վրաս բերի զբազուկս արի սիրելի...:

Կամ՝  
Մարիկն անիծեց զորդին իմ որդի, գուն դարիպանաս. երթաս ի յօտար երկիր, զղարկելն դարդն գիտնաս Ձբարն սնարք անես, ի վերայ աւազին քնանաս. վաղմէկ քնէն ի վեր եյնես, քան զԱստուած այլ ճար չունենաս:

Ա. Չօպանեան, Նահապետ Քուչակի Դիւանը, էջ 92 եւ 101:

130 Յաշխարհս ես ի շուրջ եկի չի գտայ սրտով սիրելի. Ձխելքուկս ի վրայ բերի, իմ բազուկս էր իմ սիրելի: Ղարիպ եմ ու խիստ լալի, սոյս օտար երկիրս որ եկի. 135 Չունիմ հայր, չունիմ եղբայր, չունիմ ես ոչ մէկ սիրելի: Մէկիկ բարեկամ պիտէր, որ ասի տա՛ր տէրս ալանի. 140 Միթէ տեսնելով ըզնա սակաւ սիրտըս մըխիթարի: Միթէ մայրս երբ որ ծնաւ զիս, անիծեց թէ խարիպ լինիս. երթաս ի յօտար երկիր, 145 հայր ու մայր՝ եղբայր չունենաս: Որ տեղ քոյր՝ եղբայր տեսնաս, դարձընես գերեսիկդ ու լաս. ի խորոց սրտէ հառչես, ու հազար վա՛յ անձինտ ասես: 150 Եւ սայլն այ սնարք առնես ի վերայ հողուն քնանաս. Գլուխըս ի վեր կալնես, քան զԱստուած այլ ճար չունենաս: Միթէ իմ Տէր ինձ խղճաս, 155 զարիպ տնանկիս գթաս. Փրկիչ՝ օգնական լինաս, փորձանացս որ գան ի վերաս:

Եւ յետ ճաշուն առեալ զՀոգեւոր տէրն եւ զՂուկաս եպիսկոպոսն եւ զայլսն՝ տանէին ի քաղաքն եւ երկու կողմանց բազմամբոխ ժողովուրդն որպէս պարիսպ էր՝ քրիստոնայք եւ այլազգիք: Եւ հարկանէին կանայք զՂրթունս եւ ձայն իմն ածէին, ըստ սովորութեան Արապաց. նաեւ յեկեղեցիս հանդիսի աւուրս այսպէս առնէին կանայք: Եւ այսպէս մեծաւ փառօք մուծին ի դարպասն: Եւ ես տխուր զիմօք եւ լի սըզով երթայի մինակ ի հեռաստանէ, սրբէի զաչս եւ զօհանայի զԱստուծոյ: Եւ այն օրն խոճայ Պէտիկն մեծ ընթրիս արար եւ ուրախութիւն մինչեւ յերկունն:

Եւ կայր Հալայ բարձր պուրճ մի. այժմ մղկիթ է. եւ ասին թէ զանկալատուն է:

14. ՄԱՐԱՇ—ԿԵՍԱՐԻԱ—ԱՆԿԻԻՐԻԱ—Կ. ՊՈՒԼԻՍ—ԼՎՈՎ

Ապա նախասացեալ Աբտալին գնեց հինգ ձի եւ հարիւր զուռուշ խարճի երես. եւ Պետ-

142 երօր: — 148 հառչես: 1 արտասն:

րոս անուն մշակ մի եւ Ախիճան մշակ մի հետ եղիր. եւ մեք ողջունեալ զամենեսեան՝ չուեցաք զճանապարհն մեր դէպ ի Ահհ:

Եւ ինչ տեղ գիւղ կամ քաղաքս Հայոց գնայաք, դէմ մեզ գային մեծարանօք եւ պատուով, թէ Երուսաղէմայ մահապիք կու գան: Եկաք անտի ի ՄԱՐԱՇ քաղաք, ուր փաշա նստի. կայր անդ քսան տուն հայի: Եւ անտի եկաք ՅՈՒՆՈՉ գեղն Հայոց, որ էր ի վրայ բարձր լեռան վրայ. անդ է գերեզման Ստեփանոսի Ուլնեցուն. որ եւ աղբեր քաղցրահամ բխէ սուրբ գերեզմանէն եւ լեռնէն վայր գայ պաղ եւ ցուրտ ջուրն: Չոր անդ օթեցաք զղիչերն: Ոմանք ելան ի լեռուն եւ շրջեցան. իսկ ես չի կարցայ, զի յոգնած էի:

Եւ անտի ՁԷՅԹՈՒՆ գեղոյն մինչ ի կէսօրն հասաք ի լեռո մի յոյժ բարձր, որ կոչի ԽԱՊԱՍ ԹԷԲԱՍԻ. եւ հաղիւ մինչ իրիկուն ելաք ի գլուխն: Եւ այս լեռան միջով երթայր ձիհան գետն: Եւ Յոնոզ կայր սուրբ եկեղեցի եւ վանք մի. Զէյթուն՝ վեց եկեղեցի եւ վանք մի. եւ ասին թէ ԸՃ հայի տուն կայր. այժմ երեսուն տուն. զի ցիր ու ցան եւ հալածեալք են եղել ի ձէլալոցն:

Եւ անտի մէկ օրն ՍԻՍ գնայ: Բայց լեռնային եւ քարուտ է երկիրն, չոր եւ սէհիլ. սաֆի նարինձ, թուրինձ. եւ խոչոր լվեր ու մըթեղք: Եւ ձիհան գետն երթայր լեռանց միջով, յորում բազում ձկունք կային իբրեւ զաւաղ:

ԿԵՍԱՐԻԱ

Եւ անտի բազում գեղօրէիւք եւ լեռամբք հասաք ի Կեսարիա մայրաքաղաքն, որ ունի երկու պարիսպ, ներսի եւ դրսի: Կայր երկու եկեղեցի ներսն՝ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Սարգիս, բայց գետնափոր եւ խաւարչտին տեղիս, որ մէլտիվանօք կ'իջնուն եւ ի փայտից: Եւ հինգհարիւր տուն հայ եւ աւելի կայր ի նմա, փարթամ վաճառականք եւ խոճայք անվանի մեծատունք. բայց աղքատն աւելի էր. այլ զանահաթ չունին, ամէնն զերձակ եւ խաֆթանչիք են: Ներսցիք հայնակ չի գիտեն, միայն տաճկնակ, Փարսի. իսկ գրսեցիք հայնակ գիտեն: Բայց Ղայսարու տաճիկն խիստ չար է եւ վատ. սաֆի էմիրք են, հաւատոց թշնամիք. եւ աւանն շատ է: Տներն խամ քարբիչ է. դովին փոքր, կկեղծով մըտ-

15 յօթեցաք: — 17 կարդա, զի օգնած: — 21 լէրան: — 30 մըթեղք: — 34 Կեսարիայ: — 35 պարիսպ: — 42 թէրճակ: — 45 թրացիք:

նուն . վասն որոյ եւ քաղաքն աւեր եւ վէրան :  
 50 Ունի խաներ , պէգէստան , խանութնի , չարչու  
 պազար եւ ոսկերչինոց . բայց սակաւ մարդ ի  
 նմա կ'երեւին . մի որ ճէլալին աւերել էր . եւ  
 մի որ աւնի էմիրի զուլումէ չեն ի գալ չէն-  
 լիք անել :

Գնացի մօտ Գրիգոր վարդապետն , առ որ  
 կացեալ էի . զոր սիրեալ զիս՝ յոյժ ուրախա-  
 ցաւ եւ սիրով զիս ընկալաւ : Տեսի եարայք  
 ճին եւ նոր ի ներս քաղաքին եւ ի դուրս . այլ  
 եւ եկեղեցիք մեծամեծք եւ կամարակապք ,  
 60 վիմաչէն : Այլ եւ այն եկեղեցին , ուր սուրբ  
 Լուսաւորիչն մեր եւ Ներսէս հայրապետն ձեռ-  
 նադրեցաւ Ղեւոնտիս պատրիարգէ , որ է մեծ  
 եւ փառաւոր . ամէն զամէնն մէջիւ յարած է :

Այլ եւ բազում ուխտատեղիք կան ներս եւ ի  
 65 դուրսն : Եւ Բարսեղ Կեսարացուն սուրբ գե-  
 րեզմանն քաղքէն դուրս է , յարեւելեան զիւ .  
 յառաջն մեծ եկեղեցի էր , այժմ հանգել է . անդ  
 թաղեն զմեռեալս Հայք . զի քարերն հանել են  
 եւ բերդին չէնք են դրել : Եւ ի հարաւակողմն

պարխապն դուրսն մեծ եկեղեցի Մեռիկերիտի  
 70 զինաւորին . որ եւ գերեզմանն անդ է . եւ նա  
 հանգած է . փոքր դուպա մի մնացեալ է միայն .  
 սուրբ գերեզմանին վրայ խորան , զոր ամէն  
 երկուշարթի օր ուխտ կ'երթայ բոլոր քաղաքն

խնկօք եւ մոմեղինօք . եւ մտեալ անդ եւ մեք  
 աղօթեցաք երկրպագանելով եւ մեղաց թո-  
 75 դութիւն խնդրեցաք մեղ եւ մեր ծնողաց եւ  
 ամենայն երախտաւորաց : Եւ այլ բազում սա-  
 կերք եւ մասն կայ անդ սրբոց եւ եկեղեցիք  
 յուրվք որպէս ի Ստամպուլ . բայց աւեր , միայն  
 նշմարանքն կ'երեւան :

Եւ դէմ սուրբ Մեռիկերի մզոն մի հեռի  
 հարաւակողմ մեծահամբաւ , հոչակաւոր հին  
 լեռոն Արձիւս՝ նման Պուրսու Քէչիչաղուն  
 85 եւ այլ մեծ եւ բարձր . եւ քանի հազար տա-  
 րու ձիւն կ'էրեւի վրան ամառն եւ ձմեռն ,  
 մինչ յորդնհոտած լինէին , զոր անկանէին ի  
 վայր : Եւ ասին թէ բազում կան եկեղեցիք .  
 եւ աւագ եկեղեցին մեծ վիմաչէն եւ զմպէ-

90 թաչէն , մարմարիտնեայ սներով , եւ այն աւեր :  
 Եւ ասին թէ ամէն տարի ի սուրբ Աստուա-  
 ծածնին օրն քաղաքացիքն կ'ենին ի նա խուրպ-  
 նով . եւ մեք կամեցաք ելանել . եւ ասին թէ  
 յոյժ բարձր է եւ դժուարազնաց , անտաշ քար  
 է եւ ձիւնն վերեւն . ի քարն եւ ի ձիւնն ոտաց

95 տեղ է կոփած , պիտոր հնարիւք եւ դէսնիֆով

կինն . ապա թէ ընկնի՝ հազար կտոր լինի :  
 Եւ ասին թէ իրիտ սաստիկ ձիւնամեծ է եւ  
 ցուրտ եւ մեծ քամի :

Եւ յայն կոյս լերինն ստորոտն ՏէվէլՈՒ  
 խասապան է , որ եւ անդ կայ բազում հայ ,  
 եկեղեցի եւ քահանայք : Եւ հուպ Արճիչու  
 երկորեակ լեռոն , զոր ԱՒԻ ՏԱՂ կոչեն . բայց  
 շատ փոքր է քան զԱրճիւսն . կայ եւ անդ եկե-  
 100 դեցի մի Աստուածածին անունն . անդ կան եւ  
 գէնքն Մեռիկերիտի՝ յորժամ հրամայեց Մեռ-  
 կերիտս , թէ երթ եւ սպան զհայհոյիչն որդոյ  
 իմոյ , որով եւ սպան զպիղծն Ուլիանոս . եթէ  
 կամիս զիտ եւ կարգա Յայամաւորքն սուրբ  
 105 Բարսղի : Կայր անդ եւ սրբոհայն քրոջն Բարսղի  
 գերեզման :

Եւ շուրջ քաղաքաւ բազում այգիք , որ-  
 պէս էտրնու յուրվ եւ մրգաւէտ . եօթն ազգ  
 խաղող տեսաք անդ : Այլ եւ մարդիկն են հիւ-  
 110 րնիկալ եւ մարդասէր . ամէն օր այդի մի տա-  
 նէին զմեղ . եւ մինչ իրիկունն միսիթարէին  
 զմեղ կերակրովք եւ անուշ ըմպելօք . զի գի-  
 նին առատ է եւ լի . եւ մարդիկն քաղցրազրոյց  
 եւ անուշախօսք , մարդավարք , խորագէտք եւ  
 115 բանաստեղծք եւ առակախօսք , կատակարարք  
 եւ ուրախացուցիչք . ապա ներկուք<sup>1</sup> են :

Այլ եւ վարդապետն ունէր մեծ էգի որ-  
 պէս քաղաք . եւ անդ բազում անգամ գնա-  
 ցեալ միսիթարեցաք : Եւ ասին թէ նորա էգին  
 տասներկու ազգ խաղող կայ :

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Եւ մերձակայ գեղորաք ամէն Հայք էին  
 չորս կողմ քաղքին : Եւ օր մի հեծեալ ձիս եւ  
 այլ ընկերք երթայաք Սուրբ Կարապետ . եւ  
 մինչ անցանէաք զքաղաքն՝ քարկոծէին զմեղ  
 քարամբք եւ փայտիւ անօրէնքն . զի ոչ թո-  
 120 դուն այլ տավար հեծնալ՝ զատ իչոյն . հաղիւ  
 անկաք ի դուրս : Այնմ ամի եկեալ էր չար  
 գատի մի , քրիստոնէից թշնամի . հրաման  
 եհան եկեղեցիքն մոմ չի վառել , հարսանիս  
 տավուր զուրնայ չի լինի . եւ ոչ ձիովք չըջել :

Եւ հասեալ ի վանք մի Ս ու Ր ր Գ ա-  
 ն ի է լ անունն , յոյժ գեղեցիկ եւ պատվական ,  
 վիմաչէն եւ կամարակապ . կայր եպիսկոպոս  
 մի եւ երկու մալաղ : Եւ անտի գնացաք չարեկ  
 միլ մի՝ հասաք Սուրբ Կարապետ , որ էր ի  
 140 վերայ բարձր լերան , զմպէթաչէն մեծ եւ փա-  
 ռաւոր , որ ամէն քաղաքն առջեւն կ'երեւէր :

100 այն : — 104 եկեղեցիքն : — 106 մեռիկերիտի :  
 — 109 կարգայ : — 114, 118 մարդիքն :

<sup>1</sup> Իմա՝ էչ ներկուք :

Եւ վանաց առջեւն լայն եւ ընդարձակ դաշտն  
 եւ մեծ օվան որպէս Սարբերթուն . եւ ամէնն  
 145 չէնլիք եւ գեղորայք են հայի . եւ եկեղեցիք եւ  
 վանորայք չէն :

Եւ Սուրբ Կարապետու վանաց ներքեւէ  
 կ'ենէր պաղ ջուր եւ վազէր ի դաշտն դետա-  
 նման : Եւ յոյժ զարմանալի չէնք ունէր վանքն .  
 150 զի վիմափոր էր եւ ներքեւն մինչեւ ի քաղաքն  
 մաղարայք . օթեւանք բազումք եւ տեղիք  
 ձգնաւորաց որպէս Տօրոսու լեռոն ի Կոնիայ  
 կամ Մանքէրմանու բէչէրանին , այս է գետ-  
 նափորքն : Եւ ասին թէ աստ էր սուրբ մար-  
 155 մինն . եւ աստի զկէսն առեալ Ղեւոնդ եւ Լու-  
 սաւորչին մերոյ :

Եւ այլ յառաջ մեծ գիւղն ԵՒԳԱՌԱՅ , ուր  
 իրեք եկեղեցի , իրեքհարիւր տուն հայ : Եւ  
 հինգ նետածիգ հեռու գեղն ՆԻԶԻԱ , որ է  
 160 ՆԻՒՍԻԱ , ուր է մարմին սրբոյն Գրիգորի Նիւ-  
 սացոյ , եղբօր մեծին Բարսղի : Եւ վանաց ներ-  
 քուստ մեծ աղբիւր մի բխէ . եւ ելեալ մեծ  
 գետ լինի , որ տասն ջաղացք շուր ածէ . եւ  
 զամենայն դաշտն ոռոգէ . անդ կայր երանելոյն  
 165 մարմինն թաղեալ ի գուռն Եկեղեցոյ . զոր  
 երկրպագեալ աղօթեցաք եւ մեղաց թողու-  
 թիւն խնդրեցաք : Եւ կայր եպիսկոպոս մի  
 Տէլի-Մալաղ անունն եւ հարեղայ մի : Եւ այլ  
 բազում վանորայք տեսաք , զօրաւոր եւ սքան-  
 170 չելազործ , վիմափոր եւ սալարակապ :

Եւ զարձեալ յարեւելք՝ տեսաք մեծ եւ  
 հին եարոյք վիմէ , գետնափոր ի Ղայսարի . եւ  
 ասին թէ Պաթըլ-Ղազի կոչեն , ահարկու մա-  
 զարայք եւ վիհք ունէր . զոր ասին թէ առաջն  
 175 աստ էր քաղաքն , զոր Կեսար թագաւորն չի-  
 նեց : Եւ կացաք անդ ամիս մի վասն տեսոյ  
 սուրբ վանօրէից եւ այլ ուխտատեղաց :

Եւ ի Կեսարու ելեալ ԵԱՆԶԿՈՉՆ հասաք .  
 եւ այնպէս բարձր էր որ երբ ի վայր հայէիր՝  
 180 Խղըլ-Երմախն փոքր եւ բարակ կ'երեւէր . եւ  
 էր սաՎանատիկու Բալթայի կարմնձին նման .  
 եւ ի գլուխ կամուրջին ջերմուկ ազնիւ եւ  
 քաղցրազուլիս , զի որչափ կամիս՝ ըմպէ ,  
 շահ ունի :

Եւ հինգ օրն հասաք յԱՆԿՈՒՐԻԱ : Եւ ի  
 ճանապարհին միւսանդամ անցաք ի ԶԷՇԵՒ-  
 ԿԻՐ գլխըլ-Երմախն . բայց հայու գեղ այլ  
 չտեսաք , այլ սաֆի թուրքման , զոր ջոկ ջոկ

160 նիւսիայ : — 163 ջաղածք : — 164 յորոգէ...  
 կայրն : — 185 յանկուրիայ :

հանդիպէին մեղ հօտ հօտ ոչխարօք որ արա-  
 ծէին , որպէս յԱրապիստան ուղտք . եւ օր չէր  
 190 լինար , որ ԺՌ , ԻՌ ոչխար չտեսնէաք , մեծա-  
 մեծ դմաղօք որ քարչ տանէին զկնի իւրեանց :  
 Եւ Թուրքմինն եւս շրջին կանամբք եւ զա-  
 ւակօք եայլանին . բայց կանայք նոցա յոյժ գե-  
 ղեցիկ եւ փափուկք են , կարմիրերես : 195

ԱՆԿՈՒՐԻԱ

Եւ եկաք յԱնկուրիա , որ է պէնտէր քա-  
 ղաք երեքպարսպեան՝ զըսի , միջի եւ վերջի .  
 ուր եւ բերթ կայ վերն եւ եկեղեցի հոռմի՝  
 Աստուածածին . իսկ միջի եւ ներքինն կան Հայք  
 եւ ութ եկեղեցի քարէ եւ երկուհարիւր տուն  
 հայի : Բայց ամէնքն քաղաքացիք սօֆչիք են .  
 եւ լաւ սօֆն անտի ելանէ եւ արեալ տարածի  
 ընդ ամենայն աշխարհս . եւ միշտ վաճառա-  
 կանք նստին անդ ամէն յերկրէ եւ ժողվեն  
 սօֆ , չամլիթ , եաղմուրուլս եւ այլն . եւ զի  
 10 ամենայն աշխարհէ գնաց դրամն : Եւ ամէն  
 եկեղեցի ունէր երկու իրեք քահանայ տեղացի  
 եւ զբսեցի , լուսրար , ժամբար . զի Հայաստան  
 քահանայք ժամ չեն առներ , այլ հարեղայք :  
 Որ եւ զսա ճէլալիքն աւիրած էին եւ թախած .  
 15 այժմ նոր նորոգէին . եւ էր քաղաքս ի վրայ  
 սքալա վիմի : Ապա սորա լէվէնտքն եւս չար  
 էին :

Եւ ի քաղքէն ի դուրս կայր վանք մի գե-  
 ղեցիկ , մեծ եւ փառաւոր , չարեկ միլ հեռու ,  
 20 վիմաչէն եւ կամարակապ , զմպէթածեւ . եւ  
 ասին թէ Պաւղոս առաքելոյն չէնքն է . նա չի-  
 նել ետ եւ ինքն օրհնեց : Առաջնորդ վանաց  
 Աւագ պարոնտէրն էր . ունէր իրեք հարեղայ :  
 Եւ վանից առջեւոյն բարակ ջուր մի երթայր ,  
 25 լի ձկամբք : Եւ կացի անդ ամիս մի , զի Լէհ-  
 ցիք շատ կային , որովք միսիթարեցաք : Այլ եւ  
 սորա բոլորն իրեք գեղ կայր հայի՝ Սգանօս ,  
 Պէնտօս , էրքափոսուլի : Նաեւ ամէն գեղորայքն  
 սօֆ կու բանին . ապա Ալաճուլիս լաւ է քան  
 30 զամէնն . բայց Անկուրու բանին նման չկայ :  
 Եւ այս քաղաքս լաւ չոր միս լինի . գինի ազ-  
 նիւ , թանձր եւ արիւրժ , որ այլ տեղ չի լինիր :

Անտի գնացաք ԿՕՆԻԱ : Անտի ԱՌՇԱՐ ,  
 ԵՆԿԻՇԱՐ , որ եւ անդ կան Հայք սակաւ . անդ  
 35 տեսաք զԿօն Նապրատինու , վրան քէմէր չի-  
 նած . եւ բազում ծիծաղեցաք : Կայր եւ Են-  
 կիչարն վիմաչէն եկեղեցի մի . որ եւ գնա

194 ոյժ :  
 1 յանկուրիայ : — 6 քաղաքացիկ : — 16, 76  
 յոյժմ : — 27 միսիթարեցայք : — 34 Կօնիայ :

Պաշտոնի շինվածք ասեն եւ օժել: Անտի եկաք  
 40 ՍԻՎՐԻ ՀԻՍԱՐ եւ ԽԱՐԱՀԻՍԱՐ, ուստի ա-  
 Ֆիօն կ'ելնէ. որ դարձանալի բերթ ունի եւ  
 անառիկ ամբողջ, բարձր եւ սարբ որպէս Օս-  
 մանճուրխին. վաթսուն տուն հայ կայ. քարէ  
 եկեղեցի մի. եւ չարեկ միլ դուրսն վանք մի  
 45 գեղն հայի: Բայց եւ նոքա հայնակ չի գիտեն,  
 այլ թրքի լեզուով խօսին. սոքա ամենեքեան  
 Անկուրու թէ՛ն են. այլ եւ Կօնիայ եւ այլքն  
 քաղաքն բերթացիք (հայնակ) չի գիտեն.  
 դրսեցիք գիտեն:

50 Եւ այն ամէն աշխարհն սպիտակ այծք  
 են, սուրու սուրու շրջին. եւ մաղն փայլուն  
 եւ աղնիւ իբր դապրչում եւ սիրմայ. բնու սեւ  
 չկայ. եւ ասին թէ յառաջն խիստ շատ էր եւ  
 անթիւ. ձէլալիքն զորս սպանին, զորս փա-  
 55 խուցին, զայն հետ տարան: Եւ կայր քա-  
 ղաքս մեծ եարու մի հին, վիմաչէն եւ մար-  
 մէրէ, պատերն բարձր. եւ ասին թէ եկեղեցի  
 է. այժմ հիմն ի վեր էր շրջել. Փրանկի դիր  
 կայր գրած. չկարացաք հանել:

60 Եւ անտի օր ու կէսն հասաք ի ՊԵՎՊԱ-  
 ՉԱՐՆ, որ էր պողատու եւ մրդաչատ, բայց  
 սեխն եւ ձմերուկն խիստ համեղ որպէս Ամ-  
 թայն. որ եւ անտի տանէին խօստիքէրին: Եւ  
 կայր անդ վեց տուն հայի:

65 Եւ անտի իջաք ի ՍԱՐՈՒԼԱՐՆ, որ երկու  
 աւուր ճանապարհ սաֆի պաղ ու պախչայ է  
 եւ եմիչի ծառեր. միջոյն աղբեր երթայ մեծ.  
 մինն գեղորայք են. միւս կողմն եմիչնայ, մեծ  
 մեծ սէրկէվիլ, խնձոր, յիկիտէ յորով, խա-  
 70 զող, սեխ, ձմերուկ, զոր անցաւորք ճանա-  
 պարհորդաց անահ ուտեն եւ ըմպեն, զի վասն  
 խէրու անկած է յանցս ճանապարհին:

Եւ անտի եկաք տէվրէնթ մի խիստ հա-  
 75 րամոց եւ մացառուա եւ լեռնային. եւ ասին  
 թէ յառաջն ձ. ԲՃ հոգի չկարէր անցանել,  
 դէրէ պէլ էր. խակ այժմ նասր փաշան նոր  
 խաներ շինել է, քարվանսարանի եւ բոլորն  
 գեղեր, մէջիթնի. այլ եւ հայ ալ կայր՝ վաթ-  
 սուն, եօթանասուն տուն, եւ քահանայ եւ  
 80 եկեղեցի: Եւ էր ճանապարհն ձորամէջ եւ

դժուարագնաց. եւ այլ տեղ աւագուտ. այլ եւ  
 յաւաղէ մեծ մեծ լեռներ տեսաք որպէս Մըսըն:

Անտի օր ու կէսն եկաք պէլ մի այլ, որ  
 առաւել հարամկնոց էր. եւ անդ եւս դարձա-  
 նալի շէնքեր շինել ետուր, խան եւ քարվան-  
 սարայ, մէջիթ եւ գեղորայք՝ նման առաջնոյն,  
 նոյն նասրը փաշան. շէնլիք էր արել: Եւ անդ  
 կայր հայ:

Անտի երկու ու կէսն եկաք ԻՉՄԻՏ սկէ-  
 լէն. օր մի կացեալ, մտաք ի նաւ եւ անցաք  
 ՍՏՄՊՈԼ. եւ կացաք երկու ամիս մինչ լեհու  
 քարվան եկաւ. եւ ընդ նոսա խառնեալ մեծ  
 արապա մի նստաք, իրեք ձիով, չուեցաք ի  
 Լէհ: Եւ կատարեցաւ երկուտասան ամ պան-  
 զըխառութեան իմոյ:

ՎԵՐԱԿԱՐՁ Ի ԼՎՈՎ

Եւ եկեալ ի Պուղտան՝ տեսի աւեր եւ ա-  
 մայի գերկիրն: Նոյնպէս մտեալ ի Լէհ՝ տեսի  
 աւերակ եւ վէրանէ եղեալ ի Թաթարաց. բա-  
 դում քաղաք, գեղ եւ աղարակ եւ աւանս եւ  
 ամբոցս անմարդաբնակ եւ ոչ որպէս էրէկ եւ  
 յեռանդն. զի պեղծ Թաթարքն երկու իրեք  
 հետ տարին զային մտանէին եւ երնէին անահ  
 եւ անվախ. այրէր եւ սպանէր, յափշտակէր.  
 զայլս գերի առեալ տանէր յաշխարհն իւր:

(Վերջ ուղեգրութեան):  
 Հրատարակեց Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



81 յաւագուտ: — 94 պանտխառութեան: — 96  
 յամայի: — 99 յաղարակ եւ յաւանս եւ յամբոցս:

61 օրուկէսն (կրկնում) որ էր: — 62 յամթայն:  
 — 70 ցրմերուկ զոր յանցաւորք: — 74 լեռնային: —  
 77 քարվանսարանի:

սարմանդարեան ԲԺ. Լ., Հիւանդութիւններն  
 ու տրամադրութիւն արտադրութեան մէջ:  
 Երեւան 1934: 8°, էջ 64: Գինն՝ 50 կ.:

Խնոնադրութիւն ուսումնական-արտխոր-  
 հրակցութիւնների: Երեւան 1934: 8°,  
 էջ 66 (ռուս. եւ քրտ.):

Իլիլիմգ Ռ., Իր գլխի տէր կատուն: Երեւան  
 1934: 4°, էջ 20. պատկերազարդ: Գինն՝  
 1 ռ.:

Իրթական ծրագիրը ազգային վարժարանաց  
 Բերիոյ թեմին: Հալէպ 1934: 8°, էջ 36:

Իրտսեր հրամանատարի ուղեցոյց: [Կարմիր  
 2ինուորի գրադ. Թ. 1:] Ղարաքիլիսա  
 1934: 8°, էջ 24:

Հայրապետեան Յ., Ընթերցարան: Ա. դասա-  
 րան: Երեւան 1935: 8°, էջ 78: Գինն՝ 75 կ.:

ՀՍՍՀ ամուսնութեան, ընտանիքի եւ խնամա-  
 կալութեան օրինագիրք: Երեւան 1934: 8°,  
 էջ 32: Գինն՝ 1 ռ.:

Միխէլյան Պրոֆ. Վ. Ա., Տիգրիկա: Հատ. Ա.  
 Լոյս: Թրգմ. Ռ. Բարանեան: Երեւան  
 1934: 8°, էջ 152: Գինն՝ 2.50 ռ.:

Մկրեան Մ., Վարդուհի Լ., Հայոց գրա-  
 կանութեան քրեստոմատիա միջնակարգ  
 դպրոցների համար: Ժ. դասարան: Երե-  
 ւան 1934: 8°, էջ 538: Գինն՝ 6.25 ռ.:

Յակոբեան Ս., Մկրեան Մ., Հայոց գրա-  
 կանութեան քրեստոմատիա միջնակարգ  
 դպրոցների համար: Ը. դասարան: Երե-  
 ւան 1934: 8°, էջ 468: Գինն՝ 5.50 ռ.:

Շաֆարեան Գ. Ա., Չիբրի խլախտ հիւանդու-  
 թիւնը: Երեւան 1934: 8°, էջ 24: Գինն՝  
 15 կ.:

Շիրվանգադէ, Չար ոգին: Երեւան 1934: 8°,  
 էջ 128: Գինն՝ 65 կ.:

Պատմական Յիշատակարան Երեւանի Ս. Սաչ  
 եկեղեցւոյ Գուրու-Չէլմէի հարկւրամեայ  
 յորելեանի առթիւ 1834—1934: Կ. Պոլիս  
 1934: 8°, էջ 160 (պատկերազարդ):

Պարոնեան Յ., Երկերի լրակատար ժողովա-  
 ծու: Դ. հտր.: Երեւան, Պետհրատ, 1934:  
 8°, էջ 292:

— Բաղադրավարութեան փաստերը: Պետ-  
 հրատի էջանագին գրադարան, Թ. 36—  
 38: Գինն՝ 3 ռ.:

Պարտադիր կանոններ խորհրդակցութիւնների  
 եւն: Երեւան 1934, էջ 10:

Պետրոսեան Բ. Յ. եւ Տիգրանեան Յ. Տ.,  
 Պրոֆէսիոնալ աշխատանքի եւ բեկմա-  
 տիզմի հետ կապ ունեցող ողնաշարի հի-  
 ւանդութիւններ: Երեւան 1934: 8°, էջ 32:

Պապովա Ն. Ս., Թուարանական խնդիրների  
 եւ վարժութիւնների ժողովածու: Ուսման  
 Գ. տարի: Երեւան, Պետհրատ, 1934: 8°,  
 էջ 94: Գինն՝ 80 կ.:

— Թուարանութեան դասագիրք տարրա-  
 կան դպրոցների համար: Գ. մաս: Երեւան,  
 Պետհրատ, 1934: 8°, էջ 98: Գինն՝ 1 ռ.:

— Թուարանութեան դասագիրք: Գ. դա-  
 սարան: Երեւան, Պետհրատ, 1934: 8°, էջ  
 102: Գինն՝ 1 ռ.:

Պապով Ն., Ուրուագիծ համամիութենական  
 կոմունիստական (բոլշէվիկների) կուսակ-  
 ցութեան պատմութեան: Պրակ 3: Երեւան  
 1934: 8°, էջ 420: Գինն՝ 3 ռ.:

Պուշկին Ա., Դրամատիկական հատուածներ:  
 Երեւան, Պետհրատ, 1934: 8°, էջ 106:  
 Գինն՝ 1 ռ.:

Պուշկին Ա. Ս., Դուբրովսկի: Թրգմ. Հ. Մաղ-  
 մանեան: Երեւան 1934: 8°, էջ 144: Գինն՝  
 1.20 ռ.:

Պրոստոսերդով Ն. Ն., Սաղոյի հիւթ: Երե-  
 ւան, Գիւղհրատ, 1934: 8°, էջ 38: Գինն՝  
 75 կ.:

Ռասպէ է., Միւնխհուգէնի արկածները.  
 Թրգմ. Յ. Հայրապետեան: Երեւան 1934:  
 8°, էջ 96: Գինն՝ 2 ռ.:

Ռոտինեան Լ., Որակական անալիզի ձեռնարկ.  
 բարձրագոյն ուսումնական հիմնարկների  
 համար: Երեւան, Պետհրատ, 1934: 8,  
 էջ 152: Գինն՝ 2.50 ռ.:

Սաղաքէլեան Կ., Կթող-տաւարապահի ուղե-  
 ցոյց: Երեւան 1934: 12°, էջ 68: Գինն՝  
 30 կ.:

Սեդրակեան Մ., Այգեքաղի կազմակերպումն  
 եւ գինեգործական սեղոնի նախապատ-  
 րաստումը: Երեւան 1934: 8°, էջ 46: Գինն՝  
 60 կ.:

Սեդրակ Ա. Պ., Սեւանայ լճի ստորերկրայ  
 ջրերի արտահոսանքը: Նիւթեր Սեւանայ  
 լճի եւ նրա աւազանի ուսումնասիրութեան:  
 Երեւան 1934: 8°, էջ 116: Գինն՝ 4 ռ.:

Սեդրակ Ն. Ս., Դաշտավարութեան դասա-  
 գիրք: Երեւան, Գիւղհրատ, 1934: 8°, էջ  
 321: Գինն՝ 7 ռ.:

Սուրբեան Զ., Աւետեան Յ., Պողատու այգի-  
 ների հիւանդութիւններն ու փաստաու-  
 ները եւ պայքարը նրանց դէմ: Երեւան,  
 Գիւղհրատ, 1934: 8°, էջ 38: Գինն՝ 50 կ.:

Սունդուկեան Գ., Կատակերգութիւններ,  
 արձակ երկեր, նամակներ. խմբագրու-  
 թեամբ Ս. Յարութիւնեանի: Երեւան,  
 Պետհրատ, 1934: 8°, էջ 558: Գինն՝ 22 ռ.: